

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՅԱԿԱՆՔ — ԲԵՄԱԿԱՆՔ

* Որ. 4 Յուն.— Ս. Ծննդեան պահքը կանխող աւագ տօներուն առաջինին - Դաթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբոր - նախատօնակը հանդիսատրապէս պաշտօնեցաւ շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Արարողութեանց աւարտին, Ս. Աթոռոյ «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

* Ծր. 5 Յուն.— Ս. Դաթի մարգարէին եւ Յակոբայ Տեառնեղբայր առաքելոյն: (Տօն Առաքելական Ս. Աթոռոյ Երուսաղէմի): Ըստ սովորութեան, առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ամեն. Պատրիարք Ս. Հայրը զգեստաւորուած բարձրացաւ Տեառնեղբոր Աթոռի պատուանդանին, ուր ընդունեց Միաբանութեան շնորհատրութիւնները: Հանդիսատր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան, որ խօսեցաւ տօնիկ երկու սուրբերուն կեանքին ու զործուէնութեան մասին և վեր առաւ դերը Տեառնեղբայր Յակոբոսով սկզբնատրուած Ս. Երուսաղէմի Պատրիարքութեան, որուն ներկայ արժանատր Գահակալին համար իր խօսքի աւարտին ըրաւ արեւատութեան մաղթանքներ: Ապա, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ս. Աթոռոյ հանգուցեալ պատրիարքներու հոգիներուն համար:

* Կիր. 6 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարըն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պաշտմեան:

— Ս. Ստեփանոսի հանդիսատր նախատօնակը պաշտօնեցաւ Մայր Տաճարին մէջ, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: Տօնին բուրվատակիր էին Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան եւ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան:

* Բշ. 7 Յուն.— Ս. Ստեփանոսի Նախավկային: Սարկաւագաց տօնը - երկրորդը ա-

ւագ տօներուն - այս տարի ևս տօնուեցաւ Ս. Աթոռէս ներս մեծ շուրջով: Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուած առաւօտեան ժամերգութեան ընթացքին, Ս. Աթոռոյ երեք սարկաւագներն ու վեց ուրարակիրները, առաջնորդութեամբ երկու Հոգշ. բուրվատակիր Հայրերուն, մարգարտագարդ սաղաւարտներ ի գլուխ, կատարեցին ժամերգութեան վերջին բաժինը: Ապա Ս. Պատարագ մատուցուեցաւ Աւանդատան մէջ, Ս. Ստեփանոսի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Արարողութեանց աւարտին, սարկաւագներն ու ուրարակիրները «Նախասարկաւագ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան՝ Նորին Ամենապատուութեան օրհնութիւնները ստանալու:

— Գլխատր առաքելոյ՝ Պետրոսի և Պողոսի հանդիսատր նախատօնակը պաշտուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Գշ. 8 Յուն.— Ս. Առաքելոցն՝ Պետրոսի և Պողոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պետրոսի վերնամատրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

* Դշ. 9 Յուն.— Ամեն. Պատրիարք Ս. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ պաշտուած Որդոց Որոտման մեծահանդէս նախատօնակին: Ապա տօնին շարականը՝ «Որ էն լէութեան» երգելով Միաբանութիւնը բարձրացաւ Պատրիարքարան:

* Եշ. 10 Յուն.— Տօն Ս. Որդոցն Որոտման՝ Յակոբայ Գլխադիր Առաքելոյն և Յովհաննոս Աստուածաբան Աւետարանչին: Աւագ տօներուն վերջինն ու փառատրագոյնը կատարուեցաւ մեծ հանդիսատրութեամբ: Ամեն. Պատրիարք Ս. Հայրը Ս. Պատարագը մատուց Մայր Տաճարի Ս. Գլխադրի մատրան մէջ և ապա ամպհովանիի տակ եւ Ս. Խաչափառի մատուքն ի ձեռին նախագահեց երաղարձ մեծահանդէս թափօրին: Արարողութեանց աւարտին, «Օրհնեցէք զՏէր» երգելով Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարան՝ ուր Նորին Ամենապատուութիւնը Ս. Պատարագի նշխար բաժնեց բոլորին:

* Եր. 12 Յուն.— Ս. Բարսղի Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արղ. Յովակիմեան:

* Կիր. 13 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան: Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի բովանդակ ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ:

* Բշ. 14 Յուն.— Նոր Տարի (Կաղանդ) բառ Հին Տոմարի: Կէս գիշերին՝ Մայրավանքի մեծ զանգը, փոթորիկի եւ տեղատարափ անձրևի շտապիւնին ընդմէջէն կ'աւտէր սկիզբը Նոր Տարիին: Առատօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագը մատուց, բառ սովորութեան, ժամօրհնող Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր: Ապա, Միաբանութիւն և ժողովորդ «Ռարխացիք պսակ կուսին» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան, ուր Ն. Ամենապատուութիւնը ըրաւ Ամանորի պատշաճ քանի մը խօսք եւ նարինջ բաժնեց ներկաներուն:

* Որ. 18 Յուն.— Ծրագալոյց Ս. Ծննդեան: Կէսօրէ առաջ ժամը 10ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապրանեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժներու շարանով մը մեկնեցաւ Բերդեհէմ, մեր Տիրոջ Ծննդեան յիշատակը հանդիսատրելոյ Ս. Ծննդեան սրբատեղիին վրայ: Նախորդ օրուան տեղացած ձիւնը թէև դադրած՝ բայց մեծ մասամբ հալած չէր տակաին, և Քաղաքապետարանի կարգադրութեամբ ճամբաներէն մաքրուած ձիւներուն միջև քացուած նեղ երիզէն լստաջանալով ինքնաշարժներու պատկառելի շարանը ընթացք առաւ, մինչ ամպերու ետին լալտնուող արեգակի շողերուն տակ կը պապղային ձիւնապատ դաշտերն ու շրջակայքի սարալանջերը: Նախորդ տարիներու նման, ճամբու կէսին, Յունաց Ս. Եղիա վանքին մօտ դիմաւորութեան եկած էին Բերդեհէմի փոխ-քաղաքապետն ու Պէյք-Ճալա և Պէյք-Սահուր գիւղերու քաղաքապետները: Թափօրը կարճ դադարէ մը ետք, հեծեալ ոստիկաններու առաջնորդութեամբ ճամբայ ելաւ և ժամը 11ին հասաւ Բերդեհէմ: Միաբանութիւնը դի-

մաւորուեցաւ աշակերտութեան կողմէ «Խորհուրդ մեծ» շարականով: Հոն էին նաև նահանգին զինուորական կառավարիչն ու Բերդեհէմի քաղաքապետը: Թափօրը ուղղուեցաւ դէպի մեր վանքը, ուր դիմաւորութեան եկողներ պատուասիրուեցան տեսչարանին մէջ:

— Կէսօրէ ետք ժամը 2ին, Լուսարարապետ Գերշ. Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Ծննդեան Տաճար և ուխտի իջաւ Ս. Ծննդեան Այրը՝ որմէ ետք Տաճարի մեր բաժնին մէջ ընթացք առաւ Ծրագալոյցի արարողութիւնը: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Այրին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան: Ս. Ծննդեան նախառօնակէն ետք, «Խորհուրդ մեծ»ի երգեցողութեամբ Միաբանութիւնը թափօրով բարձրացաւ Հայոց վանքը, անցնելով սինազարդ գաւթէն: Հոն բոլորն ալ նստան աւանդական ընթրիքի:

— Գիշերուան ժամը 10ին, խորհրդաւոր զանգահարութենէ մը ետք, Տաճարի մեր բաժնին մէջ սկսաւ գիշերային ժամերգութիւնը:

* Եր. 19 Յուն.— ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ: Կէս գիշերին, Միաբանութիւնը թափօրով իջաւ Ս. Ծննդեան Այրը, ուր կատարուած արարողութիւնները, մէկ ժամուան տևողութեամբ, ձայնասիրոտեցան իւրաքանչեւ ուստիոկայանէն: Այդ միջոցին էր որ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս ի դիմաց Ամեն. Պատրիարք Ս. Հօր տուաւ Ս. Ծննդեան պատգամը՝ ուղղուած բովանդակ Հայութեան: Սոյն արարողութեան ներկայ գրտնուեցան բարձրաստիճան օտար հիւրեր, ինչպէս նահանգային կառավարիչը, Երուսաղէմի քաղաքապետը, Բերդեհէմի քաղաքապետը և ուրիշներ, որոնք ապա, Սրբագացին հետ ձեռնուելէ և տօնը շնորհատրելէ ետք մեկնեցան: Ատկէ անդին, մինչև արշալոյս շարունակուեցան հանդիսութիւնները, զոյգ պատարագներու մատուցմամբ և «Ջրօրհնէք»ի հանդիսաւոր կատարմամբ: Առաջինը, Տաճարի մեր բաժնին մէջ, մատուց Հոգշ. Տ. Ռուբէն Արղ. Յովակիմեան: «Ջրօրհնէք»ի արարողութեան նախագահեց և վերջին և հանդիսաւոր Ս. Պատարագը Ս.

ԾԱՆՈՒԹԵԱՆ Այլին մէջ մատուց Գերշ. Տ. Ծահէ Արքեպս. Աճեմեան: Ապա, նախորդ օրուան նման, Միաբանութիւնը բարձրացաւ մեր վանքը՝ երգելով Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ մեղեդիներ: Հոն ամենքը բազմեցան նախաճաշի սեղանին:

— Կարճ դադարէ մը ետք, Միաբանութիւնը ինքնաշարժներու շարանով մը վերադարձաւ Երուսաղէմ: Ուսանողութիւնը, որ կը սպասէր վանքի մեծ դարպասէն ներս, «Խորհուրդ մեծ» երգելով առաջնորդէց Միաբանութիւնն ու ժողովուրդը Պատրիարքարան, ուր Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ անտիսով օրհնէց ու արձակեց բոլորը:

— Երուսաղէմի մէջ, Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ Ծրագալոյցի արարողութիւնը կատարուեցաւ, ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարին մէջ, Ս. Գերեզմանին դիմաց: Ապա Հոգշ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան մատուց Ծրագալոյցի Ս. Պատարագը Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Իսկ Տաճարի Տեսուչ Հոգշ. Տ. Վաղարշ Վրդ. Խաչատուրեան նախագահեց Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ նախատօնակին: Արարողութիւնները աւարտեցան Տաճարի մեր տեսչարանին մէջ, Ս. ԾԱՆՈՒԹԵԱՆ Աւետարանի ընթերցումով:

— Ծաբաթ առաւօտ, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ արարողութիւնները ընթացք առին ժամը 5ին: Ըստ սովորութեան, Ս. Հրեշտակապետաց եկեղեցիի տեսուչը՝ Հոգշ. Տ. Նարեկ Վրդ. Մարգարէեան, մատուց Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ և ապա նախագահեց «Զրօրհնէք»ի արարողութեան:

— Ի բացակայութեան ժառանգաւոր սաներու, թէ՛ երէկուան և թէ՛ այսօրուան երգեցողութիւնները կատարուեցան տեղացի դպիրներու կողմէ:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Հոգշ. Տ. Կիրէղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

* Կիր. 20 Յուն.— Յիշատակ մեռելոց: Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Աւագ Թարգմանը՝ Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան:

* Ուր. 25 Յուն.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Ըր. 26 Յուն.— Տօն Անուանակոչու-

թեան Տեառն: Առաւօտեան ժամը 8.30ին, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ապանեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Գերշ. Սրբազանը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Բրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որուն արարողութիւնները ձայնաւորուեցան իւրայեղեան ռատիօկայանէն: Վանք վերադարձին, «Լոյս ի յուսոյ» շարականը երգելով, Միաբանութիւն և աշակերտութիւն լսառջացան Հայոց Թաղի մուտքէն և բարձրացան Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Տնօրհնէք»ի արարողութիւն: Ս. Աթոռոյս բարիքներուն օրհնութենէն ետք, Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեանի գլխաւորութեամբ, նոյն արարողութիւնը կրկնուեցաւ վանքի մատանին, սեղանատան և խոհանոցին մէջ՝ ուր օրհնուեցաւ, ի միջի այլոց, օրուայ յատուկ հարիսայի աւանդական ճաշը, զոր համտեսեց նաև ժողովուրդի մէկ կարեւոր մասը:

* Կիռ. 27 Յուն.— Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութեան, Ս. Լուսարիչ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Բշ. 28 Յուն.— Տօն ԾԱՆՈՒԹԵԱՆ Ս. Յովհաննոս Կարապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին աջակողմը գտնուող Ս. Յովհ. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Ըր. 2 Փետր.— Ս. Թէոդոսի թագաւորին և 7 մանկանց Եփեսոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխաղիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Նորհան Վրդ. Մանուկեան:

* Կիր. 3 Փետր.— Բարեկենդան Առաջաւորի Պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Ուր. 8 Փետր.— Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Ըր. 9 Փետր.— Ս. Սարգսի զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր

Տաճարի Ա. Սարգսի մատուռին մէջ, որ հնագոյն մասը կը նկատուի Տաճարին: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան: Ըստ սովորութեան, Ա. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն՝ Ա. Աթոռոյս և ազգիս մեծ բարերար Գալուստ Կիլիկեանի հօր՝ Սարգիս Կիլիկեանի հոգւոյն համար: Սոյն պաշտամունքին կը նախագահէր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Կիր. 10 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Յարութիւն, Ա. Լուսարիկ եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Ըր. 16 Փետր.— Ա. Իսահակայ Պարթևի Հայրապետին մերոյ: Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան:

* Կիր. 17 Փետր.— Ա. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ա. Աստուածածնայ խորանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան:

* Դշ. 20 Փետր.— Վարդանանց հանդիսատր նախատօնակին ի Ա. Յակոբ նախագահեց Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոս:

* Եշ. 21 Փետր.— Ա. Վարդանանց գորավարացն մերոց 1036 վկայիցն (Յիշատակ մեռելոց և տօն ազգային): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ա. Պատարագը մատուց ժառնգ. Վարժարանի և Ընծայարանի փոխ-Տեսուչ՝ Հոգշ. Տ. Սևան Վրդ. Դարիպեան, սոյն տօնը Ա. Աթոռոյս մէջ ժառանգատրաց տօնը նկատուած ըլլալուն: Ամեն. Պատրիարք Ա. Հայրը նախագահեց «Հայրապետական մաղթանք»ին, որ կատարուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Վեհ. Հայրապետի անուն տօնին առթիւ: Ա. Պատարագէն ետք Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի նախագահութեամբ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսատր պաշտօն:

* Որ. 22 Փետր.— Ըստ իրաւական սովորութեան, Ա. Պատարագ մատուցուեցաւ Աւտրոց Ա. Մարկոս Աւետարանչի եկեղեցիին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գիսակ Վրդ. Մուրատեան: Քարոզեց Հոգշ. Տ. Հայկասէր Վարդապետ: Երթողարձի թափօրները զը-

խաւորեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

* Ըր. 23 Փետր.— Կ. Պոլսոյ Ա. Ժողովոյն (381): Ա. Պատարագը մատուցուեցաւ ի Ա. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Հայկասէր Վրդ. Պայրամեան:

— Երեկոյեան ժամերգութեան ընթացքին, Մայր Տաճարի սեղաններն ու գլխատր սրբանկարները վարագործուեցան:

* Կիր. 24 Փետր.— Բուն Բարեկենդան: Փակեալ խորանի պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* Դշ. 26 Փետր.— Տեսունընդատաջի մեծահանդէս նախատօնակին և անոր լաջորորդ «Սնդատան»ին ի Ա. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Ծահէ Արքեպ. Աճէմեան:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ պաշտոնած «Եկեղեցի»ի և Հսկման արարողութիւններուն նախագահեց Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան:

— Հսկումէն ետք, ժառնգ. Վարժարանի մարգարաշտին վրայ կը վստէր Տեսունընդատաջի աւանդական կրակը, որուն շուրջ ժողովուրդը սարքած էր խրախմանական տեսարաններ:

* Դշ. 27 Փետր.— Տեսունընդատաջ: Օրուն հանդիսատր Ա. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

* Եշ. 28 Փետր.— Սկիզբ կարգաց Մեծի Պահոց: Այս տարի, Տեսունընդատաջի տօնը Մեծ Պահոց առաջին Չորեքշաբթի օրուն գոգադիպած ըլլալուն, Մեծ Պահոց կարգերը սկսան օր մը ուշ: Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Արևագայ»ի հանդիսատր ժամերգութիւն, իսկ կէսօրէ ետք՝ «Խաղաղական» առաջին ժամերգութիւնը:

Պ Ս Ծ Տ Օ Ն Ա Կ Ս Ն Զ

* Ըր. 5 Յուն.— Երեկոյեան, Ն. Սրբութիւն Պօղոս Զ. Պապին Ա. Երկիր այցելութեան 10ամեակին առթիւ, Air France ընկերութեան կողմէ Christian Information Centreի մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնը-

ւեցան Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վրդ. Գաբրիէան և Հոգշ. Տ. Պարէտ Վրդ. Երէցեան:

* Գշ. 8 Յուն.— Օրթոտոքս Եկեղեցւոյ Ս. Ծննդեան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխատրութեամբ, բովանդակ Միաբանութիւնը շնորհատրութեան գնաց Յունաց Պատրիարքարան: Ապա Հոգշ. Տ. Կիրեղ Ծ. Վարդապետի գլխատրութեամբ, Միաբան Հայրեր այցելութիւն տրին Հապէշներու Գերշ. Եպիսկոպոսին:

* Բշ. 14 Յուն.— Իտալական նոր հիւպատոս Պր. Ժիօրճիօ Տէ Անտրէաս իր առաջին պաշտօնական այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Գշ. 15 Յուն.— Բեթղէմի զինուորական կառավարիչ Տիար Շլօմօ Մալքա այցելեց Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Կիր. 20 Յուն.— Մեր Ս. Ծննդեան տօնին առիթով, կէսօրէ առաջ, Պատրիարքարան լազորդաբար շնորհատրական այցելութեան եկան՝ Յունաց Պատր. փոխանորդ Եպիսկոպոսը, Լատինաց Ամեն. Պատրիարքը, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիսթոսը, Պապական Գերշ. Նուիրակը, Անկլիքան Արքեպիսկոպոսի փոխանորդը, Հապէշաց Եպիսկոպոսը, Մարոնիք համայնքի, Հայ Կաթողիկէներու և Ռումանական Եկեղեցւոյ մեծատրները, Լուտերականներու երէցը և իր փոխանորդը, Ն. Վսեմ. Բաղաքապետ Թէտի Բօլլէք, հահագային կառավարիչ Ռաֆայէլ Լէվի, ինչպէս նաև պետական այլ ականատր անձնատրութիւններ:

* Բշ. 21 Յուն.— Կէսօրէ առաջ, Ս. Բաղաքի հիւպատոսական կազմը ամբողջու-

թեամբ նոյն առիթով այցելեց Պատրիարքարան:

— Ս. Աթոռոյս երիտասարդ միաբաններէն և Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչ Հոգշ. Տ. Նարեկ Վրդ. Մարֆազլեան մեկնեցաւ Ամերիկա, իբրև հովիւ Սան Ֆրանսիսկոյի (Գալիֆօրնիա) Հայ համայնքին: Իր փոխարէն, Ս. Հրեշտակապետաց վանքի Տեսուչ նշանակուեցաւ Հոգշ. Տ. Վահան Վրդ. Թօփալեան:

* 10 Փետր.— Երեկոյեան, Պերլինի Բաղաքապետ Քլաուս Շոքցի Երուսաղէմ այցելութեան առթիւ, Բաղաքապետ Ն. Վսեմ. Թէտի Բօլլէքի կողմէ քաղաքապետարանի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղաւ Դիւանապետ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

* Բշ. 18 Փետր.— Վարչապետարանի նախկին տնօրէն հանգուցեալ Եաթօլ Հէրցօկի քնակարանին մէջ, Անկլիքան Արքեպիսկոպոսի քաղաքէս մեկնումին առիթով տրուած հրաժեշտի ընդունելութեան Պատրիարքարանի կողմէ ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոս:

* Ծր. 23 Փետր.— Անկլիքան Արքեպիսկոպոսը, Գերշ. Տ. Ծօրճ Էրըլթըն, Ս. Բաղաքէս իր մեկնումին առիթով այցելեց Պատրիարքարան և ընդունուեցաւ, ի բացակայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Գերշ. Տ. Ծահէ Արքեպիսկոպոսի և բովանդակ Միաբանութեան կողմէ:

* Գշ. 26 Փետր.— Բրիտանական նոր հիւպատոս Տիար Էտուրթ Էմբրսըն իր պաշտօնական առաջին այցելութիւնը տուաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր: